

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՎՐԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՄ ՃՅՈՒՂԵՐԻ  
ՓՈԽՅԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**ՑՈԼԱԿ ԱԿՈՊՅԱՆ**

*«Ես տեսնում եմ այն պետության մոտալուտ կործանումը, որտեղ օրենքն օրինական ուժ չունի և գտնվում է ինչ-որ մեկի իշխանության տակ: Իսկ այնտեղ, ուր օրենքը կառավարողների տիրակալն է, իսկ վերջիններս՝ նրա ստրուկները, ես տեսնում եմ պետության փրկությունը և այն բոլոր բարիքները, որոնք կարող են աստվածների կողմից շնորհվել պետություններին»<sup>1</sup>:*

**Պլատոն**

Խորհրդային Միության փլուզումից հետո ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Վրաստանում ձևավորված քաղաքական և իրավական համակարգը մինչ օրս բավականին տեսանելի փոփոխությունների է ենթարկվել: Այդ փոփոխությունների արդյունքում փոփոխվել են նաև գործադիր իշխանությունների ձևավորման սկզբունքները, գործունեության կարգերը, փոխհարաբերությունները ինչպես պետական իշխանության մյուս մարմինների, այնպես էլ քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ: Պետության արդյունավետ կառավարման, ժողովրդավարական արժեքների հաստատման և ամրապնդման, պետական իշխանությունը մեկ անձի կամ խմբի ձեռքում չկենտրոնացնելու նպատակով ժողովրդավարական արժեքներ որդեգրած բոլոր երկրները, այդ թվում նաև Հայաստանն ու Վրաստանը, պետության կառավարումը իրականացնում են իշխանության երեք՝ օրենսդիր, գործադիր և դատական, առանձին ճյուղերի միջոցով: Մինչ Հայաստանում և Վրաստանում գործադիր իշխանությունների և հանրային իշխանության մյուս ճյուղերի փոխհարաբերությունների ուսումնասիրմանն անցնելը, փորձենք տեսնել, թե ինչ են իրենցից ներկայացնում իշխանության վերոնշյալ երեք ճյուղերը այդ երկու հանրապետություններում:

ՀՀ իշխանության ճյուղերն ունեն տարբեր գործառնություններ.

1. Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության ընդհանուր կոլեգիալ մարմինը՝ ՀՀ կառավարությունը, մշակում և իրականացնում է երկրի ներքին քաղաքականությունը, իսկ արտաքին քաղաքականությունը մշակում և իրականացնում է ՀՀ նախագահի հետ միասին:

---

<sup>1</sup> Платон. Сочинения. Т. 3. М., 1972, с. 188-189.

2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը՝ որպես ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցչական մարմին, իրականացնում է օրենսդիր իշխանությունը երկրում, վերահսկողություն սահմանում կառավարության գործունեության նկատմամբ:

3. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունը իրականացնում են միայն դատարանները, որոնք գործում են Սահմանադրությանը և օրենքների համապատասխան, անկախ են և իշխանության որևէ ճյուղի հաշվետու չեն: Գոյություն ունեն ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններ, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դատարաններ<sup>2</sup>:

Վերոնշյալ երեք իշխանությունների գործառնությունները աննշան տարբերություններով նույնն են նաև Վրաստանում:

1. Վրաստանի գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, օրենսդրության շրջանակներում իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը: Այն պատասխանատու է Վրաստանի նախագահի և խորհրդարանի առջև:

2. Վրաստանի օրենսդիր իշխանությունը՝ խորհրդարանը, երկրի բարձրագույն ներկայացուցչական մարմինն է, որը որոշում է երկրի ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, երկրի Սահմանադրության շրջանակներում վերահսկում է կառավարության գործունեությունը և իրականացնում է այլ լիազորություններ:

3. Վրաստանի դատական իշխանությունը իրականացնում է երկրի արդարադատությունը, ապահովում սահմանադրական կարգի պահպանությունը: Այն անկախ է և իրականացվում է միայն դատարանների միջոցով<sup>3</sup>:

Հանրային իշխանության երեք ճյուղերից գատ, ինչպես բոլոր տիպի հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում և Վրաստանում, գործում է նաև նախագահի ինստիտուտը, որը, որպես կանոն, պետության գլուխն է, ապահովում է պետության ամբողջականությունը և միասնականությունը, վերահսկում է իշխանության ճյուղերի բնականոն աշխատանքը և այլն:

Ուսումնասիրելով Հայաստանի և Վրաստանի նախագահների ու գործադիր իշխանությունների փոխհարաբերությունները՝ նկատում ենք, որ երկու հանրապետություններում էլ սկզբնական շրջանում նախագահները բավականին մեծ ազդեցություն ունեին գործադիր իշխանությունների վրա. իրենք էին նշանակում վարչապետներին և կառավարության մյուս անդամներին, հանդիսանում էին գործադիր իշխանության գլուխը, նախագահում էին կառավարության նիստերը և այլն: Նախագահի ազդեցությունը գործադիր իշխանության գործունեության վրա ավելի մեծ էր Վրաստանում: Ասվածի վառ ապացույց է այն, որ մինչև 2004 թ. Վրաստանում վարչապետի պաշտոն որպես այդպիսին գոյություն չի ունեցել: Խորհրդարանական կամ հանրապետական կառավարման խառը ձև որդեգրած գրեթե բոլոր երկրներում նախագահը, չմտնելով իշխանության որևէ ճյուղի մեջ,

<sup>2</sup> Տե՛ս **Յ. Յ. Հակոբյան**, Պետական իշխանության մարմինների փոխհարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2011, էջ 5:

<sup>3</sup> Տե՛ս «Конституционный строй Грузии», 2008:

ունի այնպիսի գործառույթներ, որոնք գործադիր իշխանությանն են վերաբերում. նախագահն է իրականացնում երկրի ներքին և արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը:

Խոսելով ՀՀ քաղաքական և իրավական համակարգում նախագահի դերի մասին՝ սահմանադրական իրավունքի նշանավոր մասնագետ Գ. Հարությունյանը նշում է, որ բավականին հստակեցված չէ նախագահական ինստիտուտի տեղը պետական իշխանության համակարգում<sup>4</sup>:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ նախագահը կառավարության հետ փոխհարաբերություններում իրականացնում է հետևյալ գործառույթները. ապահովում է իշխանության բոլոր ճյուղերի բնականոն գործունեությունը, Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ խորհրդակցելուց հետո կարող է արձակել Ազգային ժողովը և նշանակել արտահերթ ընտրություն, Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ կարող է որոշակի պայմանների դեպքում արձակել Ազգային ժողովը և նշանակել արտահերթ ընտրություն՝ կիրառելով սահմանադրական սանկցիա: Նախագահը Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա վարչապետ է նշանակում պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին: Հանրապետության նախագահը վարչապետ է նշանակում կառավարության հրաժարականի ընդունումից հետո՝ տասնօրյա ժամկետում: Հանրապետության նախագահը վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է կառավարության անդամներին, ընդունում է կառավարության հրաժարականը նորընտիր Ազգային ժողովի նիստում, նախագահի կողմից իր պաշտոնն ստանձնելու, կառավարությանն անվստահություն հայտնելու, կառավարության ծրագրին հավանություն չտալու, վարչապետի կողմից հրաժարական ներկայացվելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու օրը: ՀՀ նախագահը սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ, հարկ եղած պարագայում հայտարարում է արտակարգ դրություն և այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին, գումարում է Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կամ կառավարության նախաձեռնությամբ, ինչպես նաև կարող է արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով կառավարության նիստ հրավիրել և այլն<sup>5</sup>:

Վրաստանի Սահմանադրությամբ նախագահի և գործադիր իշխանության փոխհարաբերությունները մեծ մասամբ նույնն են, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, սակայն կան նաև մի շարք տարբերություններ, որոնք էական նշանակություն ունեն ուսումնասիրվող հարցի համար:

<sup>4</sup> Տե՛ս **Գ. Հարությունյան**, Սահմանադրությունից՝ սահմանադրականություն, Եր., 2004, էջ 48:

<sup>5</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», Եր., 2005, հոդ. 49-86:

Վրաստանի Սահմանադրությամբ գործադիր իշխանության հետ փոխհարաբերություններում նախագահը իրականացնում է հետևյալ գործառնությունները. երաշխավորում է պետական մարմինների՝ Սահմանադրությանը համապատասխանող գործունեությունը, խորհրդարանի կողմից կառավարությանը անվտանգություն հայտնելու պարագայում իրավունք ունի ցրել խորհրդարանը և նշանակել արտահերթ ընտրություններ: Նախագահը վարչապետ է նշանակում այն անձին, ում պաշտպանում է խորհրդարանական ընտրությունների արդյունքում բոլորից շատ ձայներ հավաքած քաղաքական ուժը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ խորհրդարանի մեծամասնության աջակցությունը վայելող անձին:

Վարչապետը նախագահի համաձայնությամբ նշանակում է կառավարության մյուս անդամներին և նահանգապետներին և իրավասու է ազատելու նրանց: Նա է որոշում կառավարության գործունեության ուղղությունները, կազմակերպում կառավարության գործունեությունը, համակարգում և վերահսկողություն իրականացնում կառավարության անդամների գործողությունների վրա, նախագահին զեկույցներ ներկայացնում կառավարության գործունեության մասին և կառավարության գործունեության համար պատասխանատու է նախագահի և խորհրդարանի առջև:

Կառավարության կազմը, լիազորությունները և գործունեության ընթացակարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով, որի օրինագիծը կառավարության կողմից և նախագահի համաձայնությամբ ներկայացվում է խորհրդարանին: Կառավարությունը և կառավարության անդամները իրենց իշխանությունը վայր են դնում նախագահի առջև: Նախագահական ընտրություններից հետո կառավարությունը իր լիազորությունները վայր է դնում նախագահի առջև: Նախագահը իրավունք ունի հանձնարարել կառավարությանը կատարելու իր լիազորությունները մինչև կառավարության նոր կազմի նշանակումը: Խորհրդարանի կողմից վստահության արժանացած կառավարության կազմում նվազագույնը հինգ անդամի փոփոխության պարագայում նախագահը խորհրդարանին է ներկայացնում կառավարության կազմը՝ վստահություն ստանալու համար: Նախագահը կարող է կառավարության միստեր գումարել միայն կարևորագույն պետական հարցերի առկայության դեպքում: Կառավարության այդ միստերում ընդունված որոշումները ձևակերպվում են նախագահի ակտերով: Նախագահը կառավարության ներկայացմամբ նշանակում և ազատում է դեսպաններին<sup>6</sup>:

Այսպիսով, ուսումնասիրելով երկու հանրապետությունների սահմանադրությունները՝ կարող ենք փաստել, որ նախագահ-գործադիր իշխանություն փոխհարաբերությունները գտնվում են գրեթե նույն հարթության վրա. երկու հանրապետություններում էլ նախագահը վարչապետ է նշանակում այն անձին, ով վայելում է երկրի խորհրդարանի աջակցությունը, Վրաստանում երկրի նախագահին իրավունք է վերապահված կառավարության միստ գումարել երկրի համար կարևորագույն հարցերի, իսկ ՀՀ-ում արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերի շուրջ և այլն: Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության

<sup>6</sup> Տե՛ս «The Constitution of Georgia». Tbilisi, 2010, հոդ. 73-81:

Սահմանադրության՝ նախագահ-կառավարություն փոխհարաբերություններին առնչվող Վրաստանի «Մայր օրենքի» հոդվածները շատ հարցերում հակասական են: Օրինակ՝ Վրաստանի Սահմանադրության նախագահին վերաբերող գլխի 69-րդ հոդվածում բառացիորեն գրված է. «Վրաստանի նախագահը առաջնորդում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը»<sup>7</sup>: Նմանատիպ մի նախադասություն էլ զետեղված է կառավարությանը վերաբերող գլխում. «Կառավարությունը երաշխավորում է գործադիր իշխանության, պետության ներքին և արտաքին քաղաքականության իրականացումը Վրաստանի օրենսդրությանը համապատասխան»<sup>8</sup>: Սահմանադրությունում առկա այս երկու հոդվածներից բավականին դժվար է հասկանալ, թե որ մարմինն է պատասխանատու երկրի ներքին և արտաքին քաղաքականության համար: Կարևոր է նշել այն, 2010 թ. ընդունված Սահմանադրությունը իշխանությունների տարանջատման առումով դեռ ամբողջությամբ չի մտել ուժի մեջ և դեռևս կյանքի չի կոչվել՝ դրանով իսկ դեռևս ցույց չտալով իր բացասական կողմերը: Չնայած երկու հանրապետությունների նախագահ-կառավարություն փոխհարաբերություններում գոյություն ունեցող նմանություններին՝ Վրաստանի կառավարությանը շատ հարցերում տրված են անհամեմատ մեծ լիազորություններ: Օրինակ՝ ի տարբերություն ՀՀ-ի՝ Վրաստանի նախագահը դեսպաններ նշանակելիս և ազատելիս առաջնորդվում է կառավարության կարծիքով, նախագահի համաձայնությունը ստանալուց հետո վարչապետը ինքն է նշանակում կառավարության անդամներին և այլն: Սահմանադրությամբ ուժեղ գործադիր և հատկապես օրենսդիր իշխանության ամրագրումը մեծապես կախված է նաև Վրաստանի եվրաինտեգրման նկրտումներից: Սակայն այս ամենից չի կարելի ենթադրել, որ Վրաստանի կառավարությունը ավելի մեծ դեր ունի երկրի քաղաքական համակարգում և ավելի ուժեղ է, քան ՀՀ-ում: Խնդիրն այն է, որ նախ՝ ինչպես արդեն նշվեց, Վրաստանի գործող Սահմանադրությունը դեռևս ամբողջությամբ ուժի մեջ չի մտել, բացի այդ՝ Վրաստանում բացակայում է ուժեղ գործադիր իշխանություն ունենալու քաղաքական ավանդույթը, որի պատճառն այն է, որ Վրաստանը երբեք չի ունեցել ուժեղ և մեծ լիազորություններով օժտված, նախագահից քիչ կախված գործադիր իշխանություն: Բացի այդ՝ իրավական տեսանկյունից զատ, ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ այստեղ կարևոր է հաշվի առնել նաև երկրի ներքին և արտաքին քաղաքական խնդիրները, քաղաքական ուժերի հարաբերակցությունը օրենսդիր մարմնում, նախագահի, վարչապետի և կառավարության մյուս անդամների անձնային հատկանիշները և այլն:

Օրենսդիր և գործադիր իշխանությունների փոխհարաբերությունների հարցը քաղաքագիտության, իրավագիտության, տնտեսագիտության, հանրային կառավարման, փիլիսոփայության և հարակից այլ գիտությունների ուսումնասիրման կարևորագույն խնդիրներից մեկն է: Աշխարհի գրեթե բոլոր, հատկապես հանրապետական կառավարման ձև ունեցող երկրներում խորհրդարանի կարևորագույն գործառույթը գործադիր իշխա-

<sup>7</sup> Նույն տեղում, հոդ. 69:

<sup>8</sup> Նույն տեղում, հոդ. 78:

նության նկատմամբ վերահսկողության իրականացումն է: Այդ գործառույթը կառավարման տարբեր համակարգեր ունեցող երկրներում իրականացվում է տարբեր կերպ:

Խորհրդարանական հանրապետություններում (Գերմանիա, Իտալիա, Թուրքիա և այլն) կառավարությունը քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև, և վերջինս կարող է անվստահություն հայտնել կառավարությանը, որին հաջորդում է կառավարության լիազորությունները վայր դնելը<sup>9</sup>:

Նախագահական հանրապետություններում (ԱՄՆ, Բրազիլիա և այլն) կառավարության նկատմամբ անվստահության ինստիտուտը չի գործում, սակայն խորհրդարանը կառավարությունը վերահսկելու նպատակով կարող է ստեղծել քննիչ հանձնաժողովներ, կոմիտեաներ: Վերոնշյալից բացի՝ խորհրդարանը լիազորություն ունի բարձրացնելու գործադիր իշխանության ղեկավարին՝ նախագահին, պաշտոնանկ անելու հարցը<sup>10</sup>:

Կիսանախագահական հանրապետություններում (Հայաստան, Վրաստան, Ֆրանսիա, Ռուսաստան և այլն) առկա են այնպիսի քաղաքական գործընթացներ, ինչպիսիք են խորհրդարանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, նախագահին պաշտոնանկ անելը, կառավարությանը անվստահություն հայտնելը<sup>11</sup>:

ՀՀ Ազգային ժողովի և կառավարության փոխհարաբերությունները ամրագրված են ՀՀ Սահմանադրության մեջ, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ», «Բյուջետային համակարգի մասին» օրենքներում և այլ իրավական ակտերում: ՀՀ խորհրդարանի և կառավարության փոխհարաբերության հարցում նախ և առաջ պետք է հաշվի առնել հետևյալը. ՀՀ Ազգային ժողովը՝ որպես օրենսդիր մարմին, ընդունում է հասարակական կյանքի և տարբեր կառույցների, այդ թվում նաև կառավարությանը առնչվող օրենքներ: Ազգային ժողովի կողմից երկրի կառավարությանը վերաբերող օրենքների ընդունման գործընթացը կարելի է համարել խորհրդարան-կառավարություն փոխհարաբերությունների առաջին և հիմնական ոլորտ: Կառավարությանը վերաբերող բուն օրենքներից բացի՝ օրենսդիր մարմնի ընդունած գրեթե բոլոր օրենքներն ինչ-որ չափով վերաբերում են գործադիր իշխանությանը. չէ՞ որ օրենսդիր իշխանության հիմնական առաքելությունը օրենքների ընդունումն է, իսկ գործադիրինը՝ դրանց իրականացումը: Դեռ ավելին՝ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն՝ կառավարության կառուցվածքը հաստատվում է Ազգային ժողովի ընդունած օրենքով:

Կառավարություն-Ազգային ժողով փոխհարաբերության մյուս ոլորտը կառավարության օրենսդրական նախաձեռնությունն է: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ինչպես պատգամավորները, այնպես էլ կառավարությունը օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն:

Իշխանության այս երկու ճյուղերի փոխհարաբերությունների հաջորդ ոլորտը կառավարության կողմից խորհրդարանի արտահերթ նստաշրջան

<sup>9</sup> Տե՛ս **Буянский С.** Правовое государство в конституционном праве // «Закон и право», 2005, 4ч.№ 2, էջ 17-20:

<sup>10</sup> Տե՛ս «Сравнительное конституционное право». М., 2002, էջ 324-343:

<sup>11</sup> Տե՛ս **Топорнин Б. Н., Чиркин В. Е. и др.** Сравнительное конституционное право. М., 1996, էջ 581:

կամ նիստ գումարելն է, որի օրակարգը և ժամկետները որոշում է կառավարությունը<sup>12</sup>:

Օրենսդիր մարմնի վերահսկողական գործառույթների մեջ կարևոր է նաև այն հանգամանքը, որ կառավարությունը Ազգային ժողովի հավանությանն է ներկայացնում իր գործունեության ծրագիրը: Նոր ձևավորված կառավարությունը պետք է քսանօրյա ժամկետում Ազգային ժողով ներկայացնի իր գործունեության ծրագիրը, որն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի մեծամասնության կողմից: Ի տարբերություն 1995 թ. Սահմանադրության՝ բարեփոխված Սահմանադրությամբ երկու ամսվա ընթացքում երկու անգամ անընդմեջ Ազգային ժողովի կողմից կառավարության ծրագիրը չհաստատվելու դեպքում նախագահը իրավասու է արձակել այն:

Ազգային ժողովի պատգամավորները իրավունք ունեն գրավոր և բանավոր հարցերով դիմել կառավարությանը: Խմբակցությունները և պատգամավորական խմբերը ունեն հարցապնդման իրավունք: Վարչապետը և կառավարության անդամները Ազգային ժողովի նիստում պարբերաբար պատասխանում են պատգամավորների հարցերին<sup>13</sup>: Ազգային ժողովի անդամները կարող են նաև մասնակցել կառավարության այն նիստերին, որտեղ գաղտնիություն պարունակող հարցեր չեն քննարկվում:

Ազգային ժողովը կառավարության առաջարկությամբ սահմանում է հանրապետության վարչատարածքային բաժանումը:

ԱԺ-կառավարություն փոխհարաբերության ոլորտին են առնչվում նաև պետական գույքի մասնավորեցման ծրագրի հաստատումը և ընթացիկ տարվա ծրագրի կատարման մասին կառավարության հաշվետվության քննարկումն ու հաստատումը<sup>14</sup>:

Կառավարություն-Ազգային ժողով փոխհարաբերությունների հիմնական առանցքը կառավարություն ձևավորելու, անվստահություն հայտնելու և պետական բյուջեն հաստատելու գործընթացներն են: Ինչպես արդեն ասվել է, ՀՀ կառավարությունը ձևավորվում է Ազգային ժողովում մեծամասնություն կազմող քաղաքական ուժի կամ ուժերի կողմից:

ՀՀ խորհրդարանը կառավարությանը անվստահություն հայտնելու իրավունք ունի: Կառավարության անվստահության հարցը կարող է մտնել Ազգային ժողովի օրակարգ պատգամավորների ընդհանուր թվի մեկ երրորդի նախաձեռնությամբ և հաստատվել միայն այն դեպքում, երբ կողմ է քվեարկում պատգամավորների ընդհանուր թվի մեծամասնությունը: Եթե Ազգային ժողովը անստահություն է հայտնում կառավարությանը, վարչապետը հանրապետության նախագահին դիմում է ներկայացնում կառավարության հրաժարականի մասին<sup>15</sup>:

Պետական բյուջեի հաստատման գործընթացը տարբերվում է այլ օրենքների ընդունման ընթացակարգերից: Այստեղ յուրահատկությունն այն է, որ դա օրենսդիր և գործադիր իշխանությունների մենաշնորհն է, այ-

<sup>12</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», հոդ. 70, 75:

<sup>13</sup> Տե՛ս «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը, Եր., 2011, հոդ. 105-106:

<sup>14</sup> Տե՛ս **Յ. Յ. Հակոբյան**, Պետական իշխանության մարմինների փոխհարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2011, էջ 38:

<sup>15</sup> Տե՛ս «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը, հոդ. 107:

սինքն՝ այն ներկայացնում է միայն կառավարությունը, և հաստատում՝ Ազգային ժողովը: Կառավարությունը պարտավոր է բյուջեի նախագիծը ներկայացնել բյուջետային տարին սկսվելուց իննսուն օր առաջ: Ազգային ժողովը ոչ միայն հաստատում է պետական բյուջեն, այլ նաև վերահսկում է դրա կատարումը: Պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունը կառավարությունը ԱԺ է ներկայացնում մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը<sup>16</sup>: Այսպիսով, վերոնշյալից կարելի է փաստել, որ յուրաքանչյուր նստաշրջանում կառավարությունը թե՛ բյուջեի նախագիծը և թե՛ նախորդ տարվա բյուջեի կատարման հաշվետվությունը ներկայացնում է Ազգային ժողովի հաստատմանը. այս երկու հարցերի պարագայում էլ կարող է կառավարության վստահության հարց բարձրացվել:

Վրաստանում գործադիր և օրենսդիր իշխանությունների փոխհարաբերությունները ամրագրված են Վրաստանի Սահմանադրությունում, «խորհրդարանի կանոնադրությունում», ինչպես նաև զանազան օրենքներում և այլ իրավական ակտերում:

Ինչպես ԶԶ-ում, այնպես էլ Վրաստանում կառավարությունը օրենսդրական նախաձեռնության իրավունք ունի, բայց, ի տարբերություն ԶԶ-ի, Վրաստանում օրենսդրական նախաձեռնության իրավունքով օժտված են ոչ միայն խորհրդարանն ու կառավարությունը, այլ նաև Աբխազիայի Ինքնավար Հանրապետության բարձրագույն ներկայացուցչական մարմինները, Աջարիայի Ինքնավար Հանրապետությունը և ավելի քան 30.000 ընտրող: Բացառիկ դեպքերում օրենսդրական նախաձեռնության իրավունք ունի նաև նախագահը<sup>17</sup>: Սահմանադրության մեջ նման հոդվածի առկայությունը, բնականաբար, կախված է նաև քաղաքական հանգամանքներից և երկրի դաշնային կառուցվածքից:

Վրաստանի խորհրդարանի անդամը կարող է հարցով դիմել կառավարության անդամներին, ցանկացած մակարդակի տարածաշրջանային ստորաբաժանման գործադիր իշխանության ղեկավարներին և պատասխան ստանալ նրանցից:

Վրաստանի խորհրդարանը հաստատում է նաև կառավարության ծրագիրը: Եթե երկրի խորհրդարանը երեք անգամ անընդմեջ չի հաստատում կառավարության ծրագիրը, ապա նախագահը կարող է արձակել խորհրդարանը և նշանակել նոր ընտրություններ:

Կառավարության ձևավորումը տեղի է ունենում հետևյալ կերպ. խորհրդարանական ընտրություններում առավելագույն ձայներ հավաքած քաղաքական ուժը յոթօրյա ժամանակահատվածում երկրի նախագահին է ներկայացնում վարչապետի իր թեկնածուին: Նախագահն իր հերթին այդ թեկնածությունը մտցնում է խորհրդարան՝ քննարկման համար: Եթե խորհրդարանը յոթ օրվա ընթացքում չի հաստատում կառավարության կազմը, ապա մեկ ամսվա ընթացքում տեղի է ունենում նոր քվեարկություն: Եթե կառավարությունը արժանանում է խորհրդարանի հավանությանը, նախագահը նշանակում է վարչապետին<sup>18</sup>:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, հոդ. 79-86:

<sup>17</sup> Տե՛ս «The Constitution of Georgia», հոդ. 67:

<sup>18</sup> Տե՛ս **Девдалиани Н.** Учитывая настроения общества и его волю... <http://www.georgiamonitor.org/detail.php?ID=86>:



խորհրդարան-կառավարություն փոխհարաբերությունների ոլորտից է նաև այն, որ Վրաստանի խորհրդարանը իրավունք ունի անվտանգություն հայտնելու երկրի կառավարությանը: Այն խորհրդարանի օրակարգ է մտնում և քվեարկության է դրվում այն ժամանակ, երբ ստանում է պատգամավորների մեկ երրորդի հավանությունը: Կառավարության անվտանգության հարցը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել պատգամավորական ողջ ցուցակի պարզ մեծամասնությունը: Վրաստանի խորհրդարանում բյուջեի օրինագծի, կառավարության ծրագրի և այլ կարևորագույն փաստաթղթերի քննարկման ժամանակ կարող է բարձրացվել կառավարության անվտանգության հարցը<sup>19</sup>:

Ի տարբերություն ԳԳ-ի, որտեղ պետական բյուջեի հաստատման գործում մասնակցում են միայն խորհրդարանն ու կառավարությունը, Վրաստանում այս գործընթացի ժամանակ որոշակի դերակատարում ունի նաև նախագահը: Ինչպես Հայաստանում, այնպես էլ Վրաստանում միայն կառավարությունն է խորհրդարանին ներկայացնում բյուջեի նախագիծը, սակայն, ի տարբերություն Հայաստանի, Վրաստանի կառավարությունը այն իրականացնում է միայն նախագահի համաձայնությամբ: Բացի դրանից՝ նախագահն է ստորագրում նաև խորհրդարանի ընդունած «Պետական բյուջեի մասին» օրենքը: Կառավարությունը բյուջեի նախագիծը խորհրդարան պետք է ներկայացնի բյուջետային տարին սկսվելուց երեք ամիս առաջ, իսկ մինչև հաջորդ տարվա ապրիլի 1-ը խորհրդարանին զեկույց ներկայացնի բյուջեի կատարողականի մասին: Վրաստանի Սահմանադրության համաձայն, եթե խորհրդարանը, սահմանված գործընթացի համապատասխան, ներկայացված բյուջեն երեք անսվա ընթացքում չի ընդունում, Վրաստանի նախագահը իրավունք ունի ցրել կառավարությունը կամ խորհրդարանը և նշանակել խորհրդարանական արտահերթ ընտրություններ<sup>20</sup>:

Կառավարություն-խորհրդարան փոխհարաբերությունների ոլորտ կարելի է ներառել նաև երկրի նախագահի տարեկան հաշվետվությունը խորհրդարանի առջև, որտեղ բարձրացվում են նաև գործադիր իշխանությանն առնչվող խնդիրներ:

Այսպիսով՝ որպես կիսանախագահական հանրապետություններ՝ Հայաստանն ու Վրաստանը օրենսդիր և գործադիր իշխանությունների փոխհարաբերությունների առումով բավականին քիչ են տարբերվում միմյանցից: Երկու երկրում էլ այդ իշխանությունների փոխհարաբերությունների գլխավոր նպատակը օրենսդիր իշխանության վերահսկողության իրականացումն է գործադրի նկատմամբ: Երկու երկրների խորհրդարանները ունեն հակակշռող գործառույթ և որոշակի վերահսկողություն են իրականացնում: Տնտեսական, ֆինանսական փաստաթղթերի քննարկումը և հատուկ ընթացակարգերով հաստատումն իրական վերահսկողություն է գործադիր իշխանության նկատմամբ: Ուսումնասիրելով երկու երկրների օրենսդիր և գործադիր իշխանությունների փոխհարաբերությունները՝ կարելի է փաստել, որ Վրաստանում նախագահը խորհրդարանը արձակում

<sup>19</sup> Տե՛ս «Regulations of the parliament: The rules of procedure of the parliament of Georgia», Tbilisi, 2004, հոդ. 195:

<sup>20</sup> Տե՛ս «The Constitution of Georgia», հոդ. 92-93:

այն դեպքում, երբ այն երեք անգամ անընդմեջ չի հաստատում կառավարության ծրագիրը, իսկ ՀՀ-ում երկրի ղեկավարը այդ իրավունքը ունի Ազգային ժողովի կողմից կառավարության ծրագիրը երկու անգամ անընդմեջ չհաստատվելու դեպքում: Երկու երկրների իրավական ակտերի ուսումնասիրությունից երևում է, որ խորհրդարան-կառավարություն փոխհարաբերություններում առաջնային տեղ է զբաղեցնում խորհրդարանը: Ասվածից, բնականաբար, չպետք է միանտորեն եզրակացնել, որ իրականում Հայաստանում և Վրաստանում առկա է թույլ գործադիր իշխանություն: Երկու երկրներում առկա ներքին և արտաքին քաղաքական, տնտեսական, սոցիալական և զանազան այլ խնդիրները պահանջում են արագ քաղաքական որոշումների կայացում, որոնք անհնար է իրականացնել «դանդաղաշարժ խորհրդարանների» միջոցով: Ուսումնասիրելով երկու երկրների քաղաքական համակարգերը՝ նկատում ենք, որ գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանի վերահսկողությունը իրականում այդքան էլ ուժեղ չէ, և կառավարությունները բավականին լուրջ դերակատարում ունեն իրենց երկրների քաղաքական համակարգերում: Այս ամենի պատճառներից մեկը նաև պառլամենտարիզմի ավանդույթների բացակայությունն է: Մինչ օրս էլ այդ երկրների խորհրդարաններում հայտնվում են մարդիկ, որոնք երկրի օրենսդիր մարմին են մուտք գործում սեփական տնտեսական խնդիրները լուծելու նպատակով, որն էլ իր հերթին թույլ չի տալիս երկու խորհրդարաններին կատարելու իրենց հիմնական գործառույթները:

Հանրային իշխանության մարմինների մեջ գործադիր և դատական իշխանությունների փոխհարաբերությունները ամենից սակավն են: Ի տարբերություն նախագահների և օրենսդիր իշխանությունների՝ Հայաստանի Հանրապետությունում և Վրաստանում գործադիր իշխանությունները ոչ մի դերակատարում չունեն դատական իշխանությունների ձևավորման գործընթացներում: ՀՀ-ում և Վրաստանում Սահմանադրական դատարանների գործառույթների մեջ են մտնում կառավարությունների որոշումների տվյալ երկրի Սահմանադրությանը համապատասխանության հարցը: ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ Սահմանադրական դատարանը որոշում է նաև գործադիր իշխանության ղեկավարի՝ վարչապետի որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը: Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Վրաստանում կառավարությունը կարող է դիմել Սահմանադրական դատարան: ՀՀ-ում կառավարությունը կարող է դիմել Սահմանադրական դատարան հետևյալ հարցերով.

1. Որոշել օրենքների, Ազգային ժողովի որոշումների, ՀՀ նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը:

2. Եզրակացություն տալ նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին:

3. Եզրակացություն տալ համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին:

4. Որոշում կայացնել կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին<sup>21</sup>:

Վրաստանի կառավարությունը Սահմանադրական դատարան կարող է դիմել հետևյալ հարցերով՝

1. Որոշել օրենքների, նախագահի, կառավարության, Աբխազիայի և Աջարիայի Ինքնավար Հանրապետությունների բարձրագույն իշխանության մարմինների իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը:

2. Որոշում կայացնել պետական տարբեր մարմինների միջև առաջացած վեճերի վերաբերյալ:

3. Որոշել քաղաքացիների քաղաքական միավորումների, դրանց ձևավորման համապատասխանությունը Սահմանադրությանը:

4. Որոշել հանրաքվեների և ընտրությունների համապատասխանությունը Սահմանադրությանը:

5. Որոշել միջազգային համաձայնագրերի և պայմանագրերի համապատասխանությունը Սահմանադրությանը և այլն<sup>22</sup>:

Ինչպես ՀՀ-ում և Վրաստանում, այնպես էլ աշխարհի շատ երկրներում, գործադիր իշխանության կազմում գոյություն ունի արդարադատության նախարարություն, որի առկայությունը, մեր կարծիքով, հակասում է այդ երկրների սահմանադրություններին: Խնդիրն այն, որ ինչպես ՀՀ-ի, այնպես էլ Վրաստանի սահմանադրություններում ամրագրված է այն դրույթը, որ արդարադատությունը իրականացվում է դատական իշխանությունների կողմից<sup>23</sup>: Ուստի հաշվի առնելով այդ հանգամանքը՝ առաջարկում ենք անվանափոխել վերոնշյալ գերատեսչությունները՝ լրջորեն վերանայելով նրանց գործառույթները:

Այսպիսով՝ ՀՀ-ում և Վրաստանում ժողովրդավարության ամրապնդման, քաղաքացիական հասարակության հաստատման համար կարևորագույն պայմաններից են հանրային իշխանության ճյուղերի վերահսկողությունը և հակակշիռը մեկը մյուսի նկատմամբ: Իրավական պետության կարևորագույն պայմաններից մեկը ոչ այնքան իշխանության ճյուղերի վերահսկումն է մեկը մյուսին, որքան ժողովրդի վերահսկողությունը դրանց նկատմամբ, որն, անշուշտ, ավելի կարևոր է: Ընդ որում՝ կարևոր է դրա առկայությունը ոչ միայն իրավական փաստաթղթերում, այլև և հատկապես իրական կյանքում: Իսկ որ շատ ավելի կարևոր է՝ օրենքներին պետք է ենթարկվեն ոչ միայն կառավարվողները, այլև կառավարողները:

**ЦОЛАК АКОПЯН – Сравнительный анализ взаимоотношений между исполнительной и другими ветвями государственной власти в Армении и Грузии.** – Отношения, которые складываются у исполнительных властей Армении с президентом, законодательной и судебной властью, рассматриваются в статье сравнительно с аналогичными взаимоотношениями в Грузии.

<sup>21</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», Եր., 2005թ., հոդ. 100-101:

<sup>22</sup> «The Constitution of Georgia», Tbilisi, 2010, հոդ. 89:

<sup>23</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», հոդ. 91: Երևան տեղում, հոդ. 82:

Сравнительный анализ подводит к следующему выводу: имея полупрезидентскую систему правления, оба государства располагают исполнительными властями, наделёнными во многом одинаковыми полномочиями. Особое внимание уделяется важному обстоятельству: как в Армении, так и в Грузии укрепление демократии, создание гражданского общества и строительство правового государства сильно зависит от контроля – реально ли та или иная ветвь власти контролирует действия других ветвей.

**TSOLAK AKOPYAN – *Comparative Analysis of the Relationships of the Executive Power and other Branches of State Power in Armenia and Georgia.*** –

In this article an attempt has been made to study and compare the relationships of the executive powers of the Republic of Armenia and Georgia with the presidents, the legislative and judicial powers of the countries. Studying the role of the executive power in relationships with other branches of public authority, the author comes to the conclusion that both countries, having semi-presidential system of government, also have executive powers endowed with almost the same authorities. In this article much importance is given to the fact that in Armenia and Georgia consolidation of democracy, the establishment of civil society and the creation of legal state greatly depend on the real control of the branches of public authority on one another.